բարութիւն 'ի նմա ոչ գոյ և նայ ինքն չար է, վասն այս մտածութեան ասէ մարգարէն Դաւիթ՝ մարդ 'ի պատուոյ էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա, արդար այսպէս է որ՝ ով որ որ անկարգութեամբ և արտաքոյ պատուիրանի վարէ զկեանս իւր, ինքն զինքն դատապարտէ և ըստ ինքեան թողու պատիւն իւր բանականութեան և մուծանէ անձն իւր ընդ անբանից և նմանեսցի նոցա։

Նա՛ ես արարիչն մեր ամենագէտ Աստուածն պետական՝ ներելով մեզս յանդգնութեան անձանց մերոց, ոչ իբր աչառութեան, այլ իրաւամբ և արդարութեամբ շնորհեաց մեզ ժամանակ զղջանալոյ, զի գիտաց նա՛ և որպէս ինքն արար մեզ 'ի հողէ զի մեք հող եմք և բարեպէս գիտաց, զի ոչ ջանացաւ բնութիւնս մեր դիմամարտիլ և հակառակիլ ընդդէմ հրամանի տեառն արարչին մերոյ, եթէ ոչ սղալանօք խաբեցաւ, զի զուցէ դացէ առաւել երջանկութիւն, որում յարաժամ ձկտի բնութիւնս մարդւոյ 'ի նոյն, այլ անդրադարձն դատաւ գործն իւր իբրև չափազանց և պատճառ կորուսանելոյ փառս, որում առաջնում պատրաստեալ էր վասն իւր. և այս չափազանց ցանկութիւնն երևի միշտ 'ի մէջ բնութեանս մերոյ, որ ամենայն ժամ և ժամանակի ձկտէ միտս մարդւոյ Օրաւուր առաւելանալն ընդ ամենայն գործս, և որպէս ալիք բարձրանայ և իջանէ՝ նմանապէս